ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/113

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Սահակյան Աշոտ Հրաչյայի» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Իսկանդարյանին

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՄ-ԲՄԾՁԲ-21/173» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգ, մաքրության ծառայության ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Սահակյան Աշոտ Հրաչյայի» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 07.12.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԵՄ-ԲՄԾՁԲ-21/173» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին կատարելու «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ում օրենսդրությանը համապատասխան փոփոխությունները, իսկ վերջինիս անհնարինության դեպքում գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 07.12.2021թ.-ին:

07.12.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/113 համարի ծածկագիրը:

16.12.2021թ.-ին, 23.12.2021թ.-ին և 30.12.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 23.12.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.12.2021թ.-ին:

2. **<u>«Սահակյան Աշոտ Հրաչյայի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.**

«Սահակյան Աշոտ Հրաչյայի» Ա/Ձ-ն 07.12.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար սույն թվականի նոյեմբերի 24-ին ԵՄ-ԲՄԾՁԲ-21/173 ծածկագրով մաքրության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է բաց մրցույթ: Մրցույթի բացման ժամկետն է 09.12.2021 թ ժամը 11:00: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետով սահմանում է, որ «Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը», 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանում է, որ «Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են

պայմանագրում: Գնման առարկայի բնութագրերը՝ պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տփալ գնումը, ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը»: Տվյալ դեպքում հրավերում որպես բնութագիր է գրված «Կատարողը պետք է մաքրման ծառայությունները վարչական շենքերում մատուցի յուրաքանչյուր աշխատանքային օր՝ մինչև առավոտյան ժամը 09:00, այդ ժամին տարածքը պետք է լինի պատշաճ մաքրված վիճակում: Կատարողը ծառայությունները մատուցելիս չպետք է խոչընդոտի Մետրոպոլիտենի բնականոն աշխատանքային գործունեությանը և պետք է պահպանի Մետրոպոլիտենի ներքին կարգապահական կանոնները: Առանձին դեպքերում աշխատանքային գրաֆիկը սահմանվում է Պատվիրատուի կողմից նախապես համաձայնեցնելով կատարողի հետ: Կատարողն աշխատանքային օրերին պետք է վարչական շենքում ապահովի առնվազն մեկ հերթապահություն (հերթապահների թիվը և նրանց կողմից մատուցվող ծառայության տեսակը համաձայնեցնել Պատվիրատուի հետ)՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով՝ 9:00-18:00 ժամանակահատվածում, ինչպես նաև պետք է ապահովի առնվազն մեկ կոնտակտային անձի առկայություն, որը հասանելի կլինի յուրաքանչյուր օրացույցային օր՝ շուրջօրյա: Ընդ որում, բացի պլանային մաքրման ծառայության իրականացումից, Կատարողը պարտավոր է Պատվիրատուի առաջին իսկ կանչով՝ առավելագույնը 10 րոպեի ընթացքում ապահովել իր հերթապահ աշխատակցի ներկայությունը Պատվիրատուի կողմից մատնանշված վայրում և այնտեղ մատուցել այդ պահին պահանջվող ծառայությունները: Վարչական շենքերում փափուկ կահույքի (բազմոց 18 հատ, բազկաթոռ 30 հատ, աթոռ 650 հատ և կաշվե աթոռ 60 հատ) և գորգածածկույթի (200 ք/մ) , գորգերի (15 ք/մ) քիմ. մաքրում՝ հատուկ տեխնիկայի միջոցով՝ պետք է իրականացվի տարեկան 2 անգամ, ինչպես նաև անհրաժեշտության: Վարչական շենքի սանհանգույցի յուրաքանչյուր խցիկում կատարողը պետք է ապահովի մշտական, առնվազն երկշերտ զուգարանի թղթի, իսկ յուրաքանչյուր լվացարանի մոտ համապատասխան տարայով(ում)՝ հեղուկ օճառի առկայություն, իսկ 6-րդ և 7-րդ հարկերում (6 սանհանգույց) նաև պետք է ապահովի ձեռքի թղթե սրբիչ՝ համապատասխան դիսպենսերներով: Նշված հասցեում աշխատակիցների քանակը կազմում է 155 անձ, իսկ սանհանգույցների քանակը կազմում է 25 հատ:

Վարչական շենքերում հիմնարար մաքրման աշխատանքները պետք է իրականացվեն ամսական մեկ անգամ՝ շաբաթ և կիրակի օրերին՝ անհրաժեշտության դեպքում հավելյալ աշխատակիցների ներգրավմամբ: Վարչական շենքերում 170սմ-ից բարձր մակերևույթների փոշեզերծում ամսական 2 անգամ: Տարին 4 անգամ վարչական շենքի ճակատային ապակիների երկկողմ լվացում, չբացվող ապակիների մաքրում հատուկ տեխնիկայի միջոցով (800քմ.): Բոլոր կայարաններում իրականացվում են շուրջօրյա հերթապահություն՝ 4 հերթափոխով, հիմնական մաքրման աշխատանքները նախատեսելով գիշերային ժամերին՝ 24:00-06:00 ընկած ժամանակահատվածում: Բոլոր կայարաններում հիմնարար մաքրման աշխատանքները պետք է իրականացվեն ամիսը մեկ անգամ՝ գիշերային ժամերին՝ սկսած 24:00-ից մինչև 06:00-ն: Կայարաններում տարբեր տեսակի հատակների (մարմար, գրանիտ, բազալտ, մանրահատակ, պրես-կերամո գրանիտ) մաքրման, լվացման և փայլեցման համար Կատարողը պարտավոր է տրամադրել հատակ լվացող համապատասխան մեքենաներ՝ 2-ից ոչ պակաս: Ձմռան ամիսներին ընկերության վարչական շենքերի, ինչպես նաև բոլոր կայարանների հարակից տարածքների, աստիճանների մաքրում և հեռացում ձյունից և սառույցից՝ անհրաժեշտության դեպքում հատուկ տեխնիկայի կիրառմամբ: Կատարողը պետք է իր աշխատակիցներին ապահովի Կատարողի տարբերանշանով համազգեստով: Մաքրման ծառայությունների ընթացքում օգտագործվող լվացող-մաքրող նյութերը, մաքրող և փայլեցնող կտորները, աղբի տոպրակները, օդի թարմացուցիչները, և մաքրության համար անհրաժեշտ բոլոր նյութերը, սարքերը և սարքավորումներն տրամադրվում են Կատարողի կողմից: Կատարողը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում՝ ըստ մաքրման ծառայությունների մատուցման ժամանակացույցի, վերացնել թերությունները պատվիրատուի պահանջով (ամենօրյա մաքրման ծառայությունները՝ մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը, շաբաթականը՝ մինչև շաբաթվա ավարտը, ամսականը՝ հաջորդող ամսվա 3-ը ներառյալ): Մասնավորապես բնութագրում հստակեցված չեն նվազագույնը հետևյալ հարցերը.

Կատարողը, երբ կարող է սկսել աշխատել, որ ժամը 9-ին վերջացրած լինի,

Գրեթե անհնար է 10 րոպեում քաղաքի ցանկացած վայրից հասնեք Պատվիրատուի կողմից մատնանշված վայր և այնտեղ մատուցել այդ պահին պահանջվող ծառայությունները (խտրական պայման է շատ),

Գրված է վարչական շենքերում փափուկ կահույքի քիմ. մաքրում՝ հատուկ տեխնիկայի միջոցով՝ պետք է իրականացվի անհրաժեշտության դեպքում, սակայն նշված չէ, թե որոնք են այդ դեպքերը կամ առավելագույնը քանիսը կարող են լինել, ինչը ևս հստակ չի գնային առաջարկ տալու համար,

Զուգարանի թղթի և հեղուկ օճառի մասին չկա քանակային ցուցանիշ, որը ևս բարդացնում է գին հաշվելը,

Վարչական շենքերում հիմնարար մաքրման աշխատանքները պետք է իրականացվեն ամսական մեկ անգամ՝ շաբաթ և կիրակի օրերին՝ անհրաժեշտության դեպքում հավելյալ աշխատակիցների ներգրավմամբ գրվածքում չի հստակեցվում ինչով է մաքրությունը տարբերվում հիմնարար մաքրությունից,

Խտրական է, որ պատվիրատուն կայարաններում պահանջում է հերթապահություն՝ 4 հերթափոխով և նման պայմաններում սահմանում հիմնական մաքրման աշխատանքների համար հատուկ ժամ և հետո նորից սահմանում, որ հիմնարար մաքրման աշխատանքները պետք է իրականացվեն ամիսը մեկ անգամ,

Հատակների մաքրման, լվացման և փայլեցման համար Կատարողը պարտավոր է տրամադրել հատակ լվացող համապատասխան մեքենաներ՝ 2-ից ոչ պակաս գրվածով հստակ չէ, թե ամբողջ մետրոյին է վերաբերվում պահանջը, թե ամեն կայարանին:

Մաքրման ծառայությունների ընթացքում օգտագործվող լվացող-մաքրող նյութերի համար չկա որևէ քանակական ցուցանիշ:»:

Վերոգրյալի հիման վրա՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ԵՄ-ԲՄԾԶԲ-21/173» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին և Պատվիրատուին կատարելու «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ում օրենսդրությանը համապատասխան փոփոխությունները, իսկ վերջինիս անհնարինության դեպքում գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

3. <u>«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 07.12.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/20228-2021 գրությամբ դիմել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Սահակյան Աշոտ Հրաչյայի» Ա/Ձ-ի կողմից 07.12.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով փաստաթղթեր ներկայացնելու և գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին՝ ներկայացել է հրավիրված նիստերի, ներկայացնելով նաև «Գնումների

մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը և գրավոր դիրքորոշում՝ հայտնելով հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 09.12.2021թ. գրության՝ Ա/Ձ «Սահակյան Մշոտ Հրաչյայի» կողմից 07.12.2021թ. ներկայացված գնումների հետ կապված բողոքին, հայտնում եմ, որ մետրոպոլիտենի տարածքների մաքրման տեխնիկական բնութագրում ներկայացվող պահանջները լիովին համապատասխանում են պատշաճ մաքրության ապահովմանը՝ միաժամանակ հայտնում եմ, որ հիշյալ Ա/Ձ-ի կողմից ներկայացված թվով 8 հարցերը պարզ և հասկանալի են, իսկ ցանկության դեպքում նրանք բավարար ժամանակ ունեին մինչև մրցույթի բացումը տեղում լրացուցիչ պարզաբանում ստանալու:

Կից ներկայացնում եմ լրացուցիչ հստակեցում և պարզաբանում հիշյալ 8 հարցերի վերաբերյալ:

1. Յուրաքանչյուր Կատարող ինքն է որոշում ժամը քանիսին սկսել և որքան աշխատակիցների ուժերով պետք է իրականացնել մաքրման աշխատանքները, որպեսզի 09:00 դրությամբ Մոտրոպոլիտենի վարչական տարածքը լինի պատշաճ մաքուր վիճակում:

2. Խոսքը գնում է վարչական շենքի պահանջներին և, քանի որ նշված է, որ 09:00 08:00 Կատարողը պետք է վարչական տարածքում ապահովի հերթապահ աշխատակից, ուստի այդ ժամանակահատվածում Պատվիրատուի կողմից առաջին իսկ պահանջի դեպքում Կատարողը 10 րոպեի ընթացքում պետք է ապահովի հերթապահ աշխատակցի ներկայությունը մատնանշված վայրում:

3. Տեխնիկական բնութագրի մեջ հստակ նշված է, որ փափուկ կահույքի քիմ մաքրման աշխատանքները պետք է իրականացվեն տարեկան 2 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության: Ըստ անհրաժեշտության պահանջը անկանխատեսելի է, և այն կարող է ի հայտ գալ առաջացած կեղտոտվածության արդյունքում:

4. Տեխնիկական բնութագրի մեջ հստակ նշված է սանհանգույցների և աշխատակիցների քանակը, որը լիովին բավարար է հիգիենիկ պարագաների հաշվարկի համար:

5. Հիմնարար մաքրման տերմինը դա մասնագիտական տերմին է, որը պետք է տիրապետի տվյալ ոլորտի ներկայացուցիչը (դրանք տարածքների այն հատվածներն են, որոնք ամեն օր չեն մաքրվում):

6. 24 ժամյա գրաֆիկով 4 հերթափոխով աշխատանքների կազմակերպումը բղում է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի պահանջներից, իսկ մաքրման աշխատանքների իրականացման համար հատուկ ժամ սահմանելը բխում է Մետրոպոլիտենի բնականոն աշխատանքը չխաթարելու պահանջից:

7. Տեխնիկական բնութագրի մեջ հստակ նշված է, որ հատակ լվացող մեքենաների ակռայությունը (2-ից ոչ պակաս) պարտադիր է կայարաններում (բոլոր կայարանների համար):

8. Տեխնիկական բնութագրի մեջ հստակ նշված են մաքրվող տարածքների ք/մ, և յուրաքանչյուր Մասնակից ինքն է որոշում, թե տկյալ ք/մ-ի համար որքան լվացող և մաքրող միջոց է անհրաժեշտ պատշաճ մաքրություն ապահովելու համար:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/113 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից մաքրության ծառայության ձեռքբերման նպատակով 24.11.2021թ.-ին հայտարարվել է «ԵՄ-ԲՄԾՁԲ-21/173» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) սահմանվել է հետևյալը.

Կատարողը պետք է մաքրման ծառայությունները վարչական շենքերում մատուցի յուրաքանչյուր աշխատանքային օր՝ մինչև առավոտյան ժամը 09:00, այդ ժամին տարածքը պետք է լինի պատշաճ մաքրված վիճակում: Կատարողը ծառայությունները մատուցելիս չպետք է խոչընդոտի Մետրոպոլիտենի բնականոն աշխատանքային գործունեությանը և պետք է պահպանի Մետրոպոլիտենի ներքին կարգապահական կանոնները: Առանձին դեպքերում աշխատանքային գրաֆիկը սահմանվում է Պատվիրատուի կողմից նախապես համաձայնեցնելով կատարողի հետ: Կատարողն աշխատանքային օրերին պետք է վարչական շենքում ապահովի առնվազն մեկ հերթապահություն (հերթապահների թիվը և նրանց կողմից մատուցվող ծառայության տեսակը համաձայնեցնել Պատվիրատուի հետ)՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով՝ 9:00-18:00 ժամանակահատվածում, ինչպես նաև պետք է ապահովի առնվազն մեկ կոնտակտային անձի առկայություն, որը հասանելի կլինի յուրաքանչյուր օրացույցային օր՝ շուրջօրյա: Ընդ որում, բացի պլանային մաքրման ծառայության իրականացումից, Կատարողը պարտավոր է Պատվիրատուի առաջին իսկ կանչով՝ առավելագույնը 10 րոպեի ընթացքում ապահովել իր հերթապահ աշխատակցի ներկայությունը Պատվիրատուի կողմից մատնանշված վայրում և այնտեղ մատուցել այդ

պահին պահանջվող ծառայությունները: Վարչական շենքերում փափուկ կահուքի (բազմոց 18 հատ, բազկաթոռ 30 հատ, աթոռ 650 հատ և կաշվե աթոռ 60 հատ) և գորգածածկույթի (200 ք/մ) , գորգերի (15 ք/մ) քիմ. մաքրում՝ հատուկ տեխնիկայի միջոցով՝ պետք է իրականացվի տարեկան 2 անգամ, ինչպես նաև անհրաժեշտության: Վարչական շենքի սանհանգույցի յուրաքանչյուր խցիկում կատարողը պետք է ապահովի մշտական, առնվազն երկշերտ զուգարանի թղթի, իսկ յուրաքանչյուր լվացարանի մոտ համապատասխան տարայով(ում)՝ հեղուկ օճառի առկայություն, իսկ 6-րդ և 7-րդ հարկերում (6 սանհանգույց) նաև պետք է ապահովի ձեռքի թղթե սրբիչ՝ համապատասխան դիսպենսերներով: Նշված հասցեում աշխատակիցների քանակը կազմում է 155 անձ, իսկ սանհանգույցների քանակը կազմում է 25 հատ: Վարչական շենքերում հիմնարար մաքրման աշխատանքները պետք է իրականացվեն ամսական մեկ անգամ՝ շաբաթ և կիրակի օրերին՝ անհրաժեշտության դեպքում հավելյալ աշխատակիցների ներգրավմամբ: Վարչական շենքերում 170սմ-ից բարձր մակերևույթների փոշեզերծում ամսական 2 անգամ: Տարին 4 անգամ վարչական շենքի ճակատային ապակիների երկկողմ լվացում, չբացվող ապակիների մաքրում հատուկ տեխնիկայի միջոցով (800քմ.): Բոլոր կայարաններում իրականացվում են շուրջօրյա հերթապահություն՝ 4 հերթափոխով, հիմնական մաքրման աշխատանքները նախատեսելով գիշերային ժամերին՝ 24:00-06:00 ընկած ժամանակահատվածում: Բոլոր կայարաններում հիմնարար մաքրման աշխատանքները պետք է իրականացվեն ամիսը մեկ անգամ՝ գիշերային ժամերին՝ սկսած 24:00-ից մինչև 06:00-ն: Կայարաններում տարբեր տեսակի հատակների (մարմար, գրանիտ, բազալտ, մանրահատակ, պրես-կերամո գրանիտ) մաքրման, լվացման և փայլեցման համար Կատարողը պարտավոր է տրամադրել հատակ լվացող համապատասխան մեքենաներ՝ 2-ից ոչ պակաս: Ձմռան ամիսներին ընկերության վարչական շենքերի, ինչպես նաև բոլոր կայարանների հարակից տարածքների, աստիճանների մաքրում և հեռացում ձյունից և սառույցից՝ անհրաժեշտության դեպքում հատուկ տեխնիկայի կիրառմամբ: Կատարողը պետք է իր աշխատակիցներին ապահովի Կատարողի տարբերանշանով համազգեստով: Մաքրման ծառայությունների ընթացքում օգտագործվող լվացող-մաքրող նյութերը, մաքրող և փայլեցնող կտորները, աղբի տոպրակները, օդի թարմացուցիչները, և մաքրության համար անհրաժեշտ բոլոր նյութերը, սարքերը և սարքավորումներն տրամադրվում են Կատարողի կողմից: Կատարողը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում՝ ըստ մաքրման ծառայությունների մատուցման ժամանակացույցի, վերացնել թերությունները պատվիրատուի պահանջով (ամենօրյա մաքրման ծառայությունները՝ մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը, շաբաթականը՝ մինչև շաբաթվա ավարտը, ամսականը՝ հաջորդող ամսվա 3-ը ներառյալ):

ՄԱՔՐՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ

№	Մաքրվող տարածքներ	Մաքրման հաճախականությունը	Չ/Մ	Քանակը
1	Կայարանների նախամուտքի և նրան հարակից՝ աստիճանավանդակների մաքրվող մակերեսների ավլում, թաց լվացում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում,	Օրը 3 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	3944.4
2	«Մ» տիպի դռներ՝ մաքրում կեղտաբծերի հեռացում, ապակյա հատվածների փայլեցում	Օրը 2անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	583
3	Ճաղաշարի մաքրում	Շաբաթը 1 անգամ	մ^2	56
4	Նախասրահի պատերի լվացում, կեղտաբծերի, հետքերի հեռացում համապատասխան մակերևույթի համար նախատեսված հեղուկի միջոցով	Օրը 1 անգամ	մ^2	604.9
5	Նախասրահի հատակ ավլում, լվացում և փայլեցում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում	Օրը 2 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	3033.5
6	Կայարանների ծառայողական սենյակների՝ սեղանների և աթոռների (հատուկ ուշադրություն դարձնելով խաչուկներին) մաքրում, պահարանների, տեխնիկական միջոցների մաքրում և փայլեցում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, հատակի լվացում և փայլեցում, պատերի վերանայում, կեղտաբծերի հեռացում	Օրը 1 անգամ	մ^2	3011.7
7	Շարժասանդուղքների մաքրում և փայլեցում: Սույն մասով աշխատակազմը պետք է լինի վերապատրաստված և տիրապետի տեխնիկական և անվտանգության կանոններին	Օրը 3 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	3052.7
8	Ստորգետնյա կառամատույցների ավլում, լվացում և փայլեցում հատուկ մակերևույթի համար նախատեսված մաքրող հեղուկների և համապատասխան լվացող և փայլեցնող միջոցներով	Օրը 2 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	10465.17
9	Վերգետնյա կառամատույցների ավլում, լվացում և փայլեցում հատուկ մակերևույթի համար նախատեսված մաքրող հեղուկների և համապատասխան լվացող և փայլեցնող միջոցներով	Օրը 3 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	2557
10	Կառամատույցների փայլեցում՝ մարտկոցներով աշխատող փայլեցնող մեքենաների միջոցով, հատուկ մակերևույթի համար նախատեսված մաքրող հեղուկների օգնությամբ	Շաբաթը 2 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	13022.17
11	Կառամատույցի մարմարե պատերի և զարդաքանդակների լվացում և փայլեցում՝ հատուկ հեղուկների միջոցով, օգտագործելով համապատասխան տեխնիկական միջոցներ՝ պատերի և զարդաքանդակների անվնաս մաքրման համար՝ այդ թվում ջրի բարձր ճնշման սարք, և փայլեցնող մեքենա	Ամիսը 1 անգամ	մ^2	2867.1
12	Կայարաններում սյուների լվացում և փայլեցում, կեղտաբծերի հեռացում՝ բարձրակարգ հեղուկների միջոցով, որը առաջացնում է հատուկ պաշտպանիչ շերտ մակերևույթի համար, օգտագործելով համապատասխան մաքրող և փայլեցնող մեքենա	Ամիսը 2 անգամ	մ^2	1703.8
13	Կայարանային վիտրաժների լվացում	3 ամիսը մեկ անգամ	մ^2	1249
14	Վարչական շենքի նախասրահի, միջանցիկ հատվածների, աստիճանավանդակների, զուգարանների, աշխատասենյակների, սեղանների և աթոռների (հատուկ ուշադրություն դարձնելով խաչուկներին) մաքրում, պահարանների, տեխնիկական միջոցների մաքրում և փայլեցում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, հատակի լվացում և փայլեցում, պատերի վերանայում, կեղտաբծերի հեռացում	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	4353
15	Կապի շենքի նախասրահի, միջանցիկ հատվածների, աստիճանավանդակի, զուգարանների, աշխատասենյակների, սեղանների և աթոռների (հատուկ ուշադրություն դարձնելով խաչուկներին) մաքրում, պահարանների, տեխնիկական միջոցների մաքրում և փայլեցում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, հատակի լվացում և փայլեցում, պատերի վերանայում, կեղտաբծերի հեռացում	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	2180
16	էլ. հավաքակայանի վարչական շենքի նախասրահի, միջանցիկ հատվածների, աստիճանավանդակի, զուգարանների, աշխատասենյակների, սեղանների և աթոռների (հատուկ ուշադրություն դարձնելով խաչուկներին) մաքրում, պահարանների, տեխնիկական միջոցների մաքրում և փայլեցում, աղբի հեռացում և տոպրակների	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	2186

	տեղադրում, հատակի լվացում և փայլեցում, պատերի վերանայում, կեղտաբծերի հեռացում			
17	էլ. հավաքակայանի վարչական շենքի չբացվող պատուհանների լվացում՝ ավտոաշտարակի միջոցով	3 ամիսը մեկ անգամ	մ^2	282.7
18	էլ. հավաքակայանի վարչական շենքի հարակից տարածքի ավլում և աղբի հեռացում և տոպրակների տեղադրում	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	935
19	2 և 3 վագոններից բաղկացած շարժակազմի ներսի մաքրվող մակերեսների հիմնական մաքրում և ախտահանում հատուկ նյութերով	Օրը 1 գնացք	մ^2	517
20	Օրվա ընթացքում ընթացիկ սպասարկման ժամանած գնացքների վագոնների ներքին մաքրում՝ հատակի թաց լվացում և փայլեցում, կտորե և կաշվե նստարանների մաքրում՝ լաքաների հեռացում, լուսավորող սարքերի մաքրում, դռների, բռնակների և ապակիների մաքրում	Օրը 20 գնացք, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	10340
21	Վագոնների կտորե և կաշվե նստարանների քիմ. Մաքրում՝ հատուկ տեխնիկայի և նյութերի միջոցով	Շաբաթը 1 անգամ	մ^2	702
22	Էլ. հավաքակայանի վերամբարձ վերանորոգման արտադրամասի միջանցիկ հատվածների, աստիճանա-վանդակի, զուգարանների, աշխատա-սենյակների, սեղանների և աթոռների մաքրում, պահարանների, տեխնիկա-կան միջոցների մաքրում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, հատակի ավլում, լվացում և փայլեցում, պատերի մաքրում, կեղտաբծերի հեռացում, ցնցուղարանների մաքրում և ախտահանում	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	4439.2
23	Էլ. հավաքակայանի կոմպլեքս վերանորոգման արտադրամասի աշխատասենյակների, սեղանների և աթոռների մաքրում, պահարանների, տեխնիկական միջոցների մաքրում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, հատակի ավլում, լվացում և փայլեցում, պատերի մաքրում, կեղտաբծերի հեռացում	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	5104.2
24	Էլ. հավաքակայանում գտնվող մեքենավարների ուսումնական կենտրոնի մաքրում, լվացում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում:	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	74.4
25	Վարչական շենքի, կապի և վերանորոգման արտադրամասի հարակից տարածքների ավլում, լվացում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, ձմռան ամիսներին ձյան մաքրում և հեռացում	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	976.6
26	Սանհանգույցներ (նստատեղերի, լվացարանների, զուգարանակոնքերի հարող մակերեսի մաքրում և ախտահանում)	Օրը 3 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	հատ	63
27	Հայելիների մաքրում, փայլեցում	օրը 2 անգամ	մ^2	17.3
28	Ենթակայանների հատակի ավլում և խոնավ մաքրում, սեղանների և աթոռների մաքրում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	4062.2
29	Կապ մասնաճյուղի սարքավորումների և սպասարկող անձնակազմի տարածքների հատակի ավլում և խոնավ մաքրում, սեղանների և աթոռների մաքրում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում	Շաբաթը 2անգամ	մ^2	1257.2
30	Շարժասանդուղքների մեքենայական սրահների հատակի ավլում և խոնավ մաքրում, սեղանների և աթոռների մաքրում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, ծառայողական սենյակներ, նախասրահներ, աստիճաններ	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	2676.9
31	«Հանրապետության հրապարակ» կայարանի մուտքի հարևանությամբ գտնվող շատրվանների հատվածի հատակի ավլում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում	Շաբաթը 2անգամ	մ^2	1493.53
32	Մոտոդեպոյում գտնվող զուգարանի (նստատեղերի, լվացարանների, զուգարանակոնքերի հարող մակերեսի մաքրում և ախտահանում), լոգասենյակների, չորացման կետի (сушилка) և կաթսայատան մաքրո ւմ, հատակի լվացում և փայլեցում, պատերի վերանայում, կեղտաբծերի հեռացում	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	88

iii. armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ԵՄ-ԲՄԾՁԲ-21/173» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել թվով չորս (4) մասնակից:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Սահակյան Աշոտ Հրաչյայի» Ա/Ձ-ի կողմից 07.12.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին

մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները.....:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր

մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից մաքրության ծառայության ձեռքբերման նպատակով 24.11.2021թ.-ին հայտարարված «ԵՄ-ԲՄԾՁԲ-21/173» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը.

Կատարողը պետք է մաքրման ծառայությունները վարչական շենքերում մատուցի յուրաքանչյուր աշխատանքային օր՝ մինչև առավոտյան ժամը 09:00, այդ ժամին տարածքը պետք է լինի պատշաճ մաքրված վիճակում: Կատարողը ծառայությունները մատուցելիս չպետք է խոչընդոտի Մետրոպոլիտենի բնականոն աշխատանքային գործունեությանը և պետք է պահպանի Մետրոպոլիտենի ներքին կարգապահական կանոնները: Առանձին դեպքերում աշխատանքային գրաֆիկը սահմանվում է Պատվիրատուի կողմից նախապես համաձայնեցնելով կատարողի հետ: Կատարողն աշխատանքային օրերին պետք է վարչական շենքում ապահովի առնվազն մեկ հերթապահություն (հերթապահների թիվը և նրանց կողմից մատուցվող ծառայության տեսակը համաձայնեցնել Պատվիրատուի հետ)՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով՝ 9:00-18:00 ժամանակահատվածում, ինչպես նաև պետք է ապահովի առնվազն մեկ կոնտակտային անձի առկայություն, որը հասանելի կլինի յուրաքանչյուր օրացույցային օր՝ շուրջօրյա: Ընդ որում, բացի պլանային մաքրման ծառայության իրականացումից, Կատարողը պարտավոր է Պատվիրատուի առաջին իսկ կանչով՝ առավելագույնը 10 րոպեի ընթացքում ապահովել իր հերթապահ աշխատակցի ներկայությունը Պատվիրատուի կողմից մատնանշված վայրում և այնտեղ մատուցել այդ պահին պահանջվող ծառայությունները: Վարչական շենքերում փափուկ կահույքի (բազմոց 18 հատ, բազկաթոռ 30 հատ, աթոռ 650 հատ և կաշվե աթոռ 60 հատ) և գորգածածկույթի (200 ք/մ) , գորգերի (15 ք/մ) քիմ. մաքրում՝ հատուկ տեխնիկայի միջոցով՝ պետք է իրականացվի տարեկան 2 անգամ, ինչպես նաև անհրաժեշտության: Վարչական շենքի սանհանգույցի յուրաքանչյուր խցիկում կատարողը պետք է ապահովի մշտական, առնվազն երկշերտ զուգարանի թղթի, իսկ յուրաքանչյուր լվացարանի մոտ համապատասխան տարայով(ում)՝ հեղուկ օճառի առկայություն, իսկ 6-րդ և 7-րդ հարկերում (6 սանհանգույց) նաև պետք է ապահովի ձեռքի թղթե սրբիչ՝ համապատասխան դիսպենսերներով: Նշված հասցեում աշխատակիցների քանակը կազմում է 155 անձ, իսկ սանհանգույցների քանակը կազմում է 25 հատ: Վարչական շենքերում հիմնարար մաքրման աշխատանքները պետք է իրականացվեն ամսական մեկ անգամ՝ շաբաթ և կիրակի օրերին՝ անհրաժեշտության դեպքում հավելյալ աշխատակիցների ներգրավմամբ: Վարչական շենքերում 170սմ-ից բարձր մակերևույթների փոշեզերծում ամսական 2 անգամ: Տարին 4 անգամ վարչական շենքի ճակատային ապակիների երկկողմ լվացում, չբացվող ապակիների մաքրում հատուկ տեխնիկայի միջոցով (800քմ.): Բոլոր կայարաններում իրականացվում են շուրջօրյա հերթապահություն՝ 4 հերթափոխով, հիմնական մաքրման աշխատանքները նախատեսելով գիշերային ժամերին՝ 24:00-06:00 ընկած ժամանակահատվածում: Բոլոր կայարաններում հիմնարար մաքրման աշխատանքները պետք է իրականացվեն ամիսը մեկ անգամ՝

գիշերային ժամերին՝ սկսած 24:00-ից մինչև 06:00-ն: Կայարաններում տարբեր տեսակի հատակների (մարմար, գրանիտ, բազալտ, մանրահատակ, պրես-կերամո գրանիտ) մաքրման, լվացման և փայլեցման համար Կատարողը պարտավոր է տրամադրել հատակ լվացող համապատասխան մեքենաներ՝ 2-ից ոչ պակաս: Ձմռան ամիսներին ընկերության վարչական շենքերի, ինչպես նաև բոլոր կայարանների հարակից տարածքների, աստիճանների մաքրում և հեռացում ձյունից և սառույցից՝ անհրաժեշտության դեպքում հատուկ տեխնիկայի կիրառմամբ: Կատարողը պետք է իր աշխատակիցներին ապահովի Կատարողի տարբերանշանով համազգեստով: Մաքրման ծառայությունների ընթացքում օգտագործվող լվացող-մաքրող նյութերը, մաքրող և փայլեցնող կտորները, աղբի տոպրակները, օդի թարմացուցիչները, և մաքրության համար անհրաժեշտ բոլոր նյութերը, սարքերը և սարքավորումներն տրամադրվում են Կատարողի կողմից: Կատարողը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում՝ ըստ մաքրման ծառայությունների մատուցման ժամանակացույցի, վերացնել թերությունները պատվիրատուի պահանջով (ամենօրյա մաքրման ծառայությունները՝ մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը, շաբաթականը՝ մինչև շաբաթվա ավարտը, ամսականը՝ հաջորդող ամսվա 3-ը ներառյալ):

ՄԱՔՐՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ

№	Մաքրվող տարածքներ	Մաքրման հաճախականությունը	Չ/Մ	Քանակը
1	Կայարանների նախամուտքի և նրան հարակից՝ աստիճանավանդակների մաքրվող մակերեսների ավլում, թաց լվացում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում,	Օրը 3 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	3944.4
2	«Մ» տիպի դռներ՝ մաքրում կեղտաբծերի հեռացում, ապակյա հատվածների փայլեցում	Օրը 2անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	583
3	Ճաղաշարի մաքրում	Շաբաթը 1 անգամ	մ^2	56
4	Նախասրահի պատերի լվացում, կեղտաբծերի, հետքերի հեռացում համապատասխան մակերևույթի համար նախատեսված հեղուկի միջոցով	Օրը 1 անգամ	մ^2	604.9
5	Նախասրահի հատակ ավլում, լվացում և փայլեցում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում	Օրը 2 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	3033.5
6	Կայարանների ծառայողական սենյակների՝ սեղանների և աթոռների (հատուկ ուշադրություն դարձնելով խաչուկներին) մաքրում, պահարանների, տեխնիկական միջոցների մաքրում և փայլեցում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, հատակի լվացում և փայլեցում, պատերի վերանայում, կեղտաբծերի հեռացում	Օրը 1 անգամ	մ^2	3011.7
7	Շարժասանդուղքների մաքրում և փայլեցում: Սույն մասով աշխատակազմը պետք է լինի վերապատրաստված և տիրապետի տեխնիկական և անվտանգության կանոններին	Օրը 3 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	3052.7
8	Ստորգետնյա կառամատույցների ավլում, լվացում և փայլեցում հատուկ մակերևույթի համար նախատեսված մաքրող հեղուկների և համապատասխան լվացող և փայլեցնող միջոցներով	Օրը 2 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	10465.17
9	Վերգետնյա կառամատույցների ավլում, լվացում և փայլեցում հատուկ մակերևույթի համար նախատեսված մաքրող հեղուկների և համապատասխան լվացող և փայլեցնող միջոցներով	Օրը 3 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	2557
10	Կառամատույցների փայլեցում՝ մարտկոցներով աշխատող փայլեցնող մեքենաների միջոցով, հատուկ մակերևույթի համար նախատեսված մաքրող հեղուկների օգնությամբ	Շաբաթը 2 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	13022.17

11	Կառամատույցի մարմարե պատերի և զարդաքանդակների լվացում և փայլեցում՝ հատուկ հեղուկների միջոցով, օգտագործելով համապատասխան տեխնիկական միջոցներ՝ պատերի և զարդաքանդակների անվնաս մաքրման համար՝ այդ թվում ջրի բարձր ճնշման սարք, և փայլեցնող մեքենա	Ամիսը 1 անգամ	մ^2	2867.1
12	Կայարաններում սյուների լվացում և փայլեցում, կեղտաբծերի հեռացում՝ բարձրակարգ հեղուկների միջոցով, որը առաջացնում է հատուկ պաշտպանիչ շերտ մակերևույթի համար, օգտագործելով համապատասխան մաքրող և փայլեցնող մեքենա	Ամիսը 2 անգամ	մ^2	1703.8
13	Կայարանային վիտրաժների լվացում	3 ամիսը մեկ անգամ	մ^2	1249
14	Վարչական շենքի նախասրահի, միջանցիկ հատվածների, աստիճանավանդակների, զուգարանների, աշխատասենյակների, սեղանների և աթոռների (հատուկ ուշադրություն դարձնելով խաչուկներին) մաքրում, պահարանների, տեխնիկական միջոցների մաքրում և փայլեցում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, հատակի լվացում և փայլեցում, պատերի վերանայում, կեղտաբծերի հեռացում	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	4353
15	Կապի շենքի նախասրահի, միջանցիկ հատվածների, աստիճանավանդակի, զուգարանների, աշխատասենյակների, սեղանների և աթոռների (հատուկ ուշադրություն դարձնելով խաչուկներին) մաքրում, պահարանների, տեխնիկական միջոցների մաքրում և փայլեցում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, հատակի լվացում և փայլեցում, պատերի վերանայում, կեղտաբծերի հեռացում	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	2180
16	Էլ. հավաքակայանի վարչական շենքի նախասրահի, միջանցիկ հատվածների, աստիճանավանդակի, զուգարանների, աշխատասենյակների, սեղանների և աթոռների (հատուկ ուշադրություն դարձնելով խաչուկներին) մաքրում, պահարանների, տեխնիկական միջոցների մաքրում և փայլեցում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, հատակի լվացում և փայլեցում, պատերի վերանայում, կեղտաբծերի հեռացում	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	2186
17	Էլ. հավաքակայանի վարչական շենքի չբացվող պատուհանների լվացում՝ ավտոաշտարակի միջոցով	3 ամիսը մեկ անգամ	մ^2	282.7
18	Էլ. հավաքակայանի վարչական շենքի հարակից տարածքի ավլում և աղբի հեռացում և տոպրակների տեղադրում	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	935
19	2 և 3 վագոններից բաղկացած շարժակազմի ներսի մաքրվող մակերեսների հիմնական մաքրում և ախտահանում հատուկ նյութերով	Օրը 1 գնացք	մ^2	517
20	Օրվա ընթացքում ընթացիկ սպասարկման ժամանած գնացքների վագոնների ներքին մաքրում՝ հատակի թաց լվացում և փայլեցում, կտորե և կաշվե նստարանների մաքրում՝ լաքաների հեռացում, լուսավորող սարքերի մաքրում, դռների, բռնակների և ապակիների մաքրում	Օրը 20 գնացք, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	10340
21	Վագոնների կտորե և կաշվե նստարանների քիմ. Մաքրում՝ հատուկ տեխնիկայի և նյութերի միջոցով	Շաբաթը 1 անգամ	մ^2	702
22	Էլ. հավաքակայանի վերամբարձ վերանորոգման արտադրամասի միջանցիկ հատվածների, աստիճանա-վանդակի, զուգարանների, աշխատա-սենյակների, սեղանների և աթոռների մաքրում, պահարանների, տեխնիկա-կան միջոցների մաքրում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, հատակի ավլում, լվացում և փայլեցում, պատերի մաքրում, կեղտաբծերի հեռացում, ցնցուղարանների մաքրում և ախտահանում	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	4439.2
23	Էլ. հավաքակայանի կոմպլեքս վերանորոգման արտադրամասի աշխատասենյակների, սեղանների և աթոռների մաքրում, պահարանների, տեխնիկական միջոցների մաքրում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, հատակի ավլում, լվացում և փայլեցում, պատերի մաքրում, կեղտաբծերի հեռացում	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	5104.2
24	Էլ. հավաքակայանում գտնվող մեքենավարների ուսումնական կենտրոնի մաքրում, լվացում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում:	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	74.4
25	Վարչական շենքի, կապի և վերանորոգման արտադրամասի	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ	մ^2	976.6

	հարակից տարածքների ավլում, լվացում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, ձմռան ամիսներին ձյան մաքրում և հեռացում	անհրաժեշտության		
26	Սանհանգույցներ (նստատեղերի, լվացարանների, զուգարանակոնքերի հարող մակերեսի մաքրում և ախտահանում)	Օրը 3 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	հատ	63
27	Հայելիների մաքրում, փայլեցում	օրը 2 անգամ	մ^2	17.3
28	Ենթակայանների հատակի ավլում և խոնավ մաքրում, սեղանների և աթոռների մաքրում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	4062.2
29	Կապ մասնաճյուղի սարքավորումների և սպասարկող անձնակազմի տարածքների հատակի ավլում և խոնավ մաքրում, սեղանների և աթոռների մաքրում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում	Շաբաթը 2անգամ	մ^2	1257.2
30	Շարժասանդուղքների մեքենայական սրահների հատակի ավլում և խոնավ մաքրում, սեղանների և աթոռների մաքրում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, ծառայողական սենյակներ, նախասրահներ, աստիճաններ	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	2676.9
31	«Հանրապետության հրապարակ» կայարանի մուտքի հարևանությամբ գտնվող շատրվանների հատվածի հատակի ավլում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում	Շաբաթը 2անգամ	մ^2	1493.53
32	Մոտոդեպոյում գտնվող զուգարանի (նստատեղերի, լվացարանների, զուգարանակոնքերի հարող մակերեսի մաքրում և ախտահանում), լոգասենյակների, չորացման կետի (сушилка) և կաթսայատան մաքրո ւմ, հատակի լվացում և փայլեցում, պատերի վերանայում, կեղտաբծերի հեռացում	Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության	մ^2	88

armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ԵՄ-ԲՄԾՁԲ-21/173» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել թվով չորս (4) մասնակից:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված

էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշման և Ընկերության կողմից ներկայացված բողոքի իրավական ու փաստական հանգամանքներին, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել թվով չորս մասնակից՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին ներկայացրել է վերաբերելի և բավարար ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի

13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ԵՄ-ԲՄԾՁԲ-21/173» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը:

Բողոքի քննության ընթացքում ձեռք բերված փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ընթացակարգի տեխնիկական բնութագրերը համապատասխանում են Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներին, ապահովում են մրցակցության հավասար պայմաններ մասնակիցների համար և բավարարում են մեկից ավելի հնարավոր մասնակիցների և արտադրողների մասնակցությունը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Սահակյան Աշոտ Հրաչյայի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր չեն, իսկ Ընթացակարգի պահանջներն հիմնավոր են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԵՄ-ԲՄԾՁԲ-21/173» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի տեխնիկական բնութագիրն ենթակա չէ փոփոխման, իսկ գնման ընթացակարգը՝ չկայացած հայտարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Սահակյան Աշոտ Հրաչյայի» Ա/Ձ-ի կողմից 07.12.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/113 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**